ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3164 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ՕՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 43/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍՄԻԿ ԼԵՎՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐՏԱՇԵՍ ՀՄԱՅԱԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ, ԿԱՐԻՆԵ ՀՄԱՅԱԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ, ԼՅՈՒԴՄԻԼԱ ԱՐՄԵՆԱԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ՍԵՐԳԵՅԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻ, ՆԵԼԼԻ ՍԵՐԳԵՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ, ՎԱՐՍԵՆԻԿ ՍԵՐԳԵՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հասմիկ Լևոնի Հարությունյանի (ծնված 07.08.1959թ.), Արտաշես Հմայակի Գալստյանի (ծնված 03.09.1987թ.), Կարինե Հմայակի Գալստյանի (ծնված 10.09.1983թ.), Լյուդմիլա Արմենակի Գալստյանի (ծնված 00.00.1945թ.), Լուսինե Սերգեյի Ղանդիլյանի (ծնված 19.09.1973թ.), Նելլի Սերգեյի Գալստյանի (ծնված 29.06.1977թ.), Վարսենիկ Սերգեյի Մկրտչյանի (ծնված 21.01.1970թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Օտյան փողոցի հ.43/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 576.84քմ, որից 576.2քմ մակերեսով հողամասը Հասմիկ Լևոնի Հարությունյանին, Արտաշես Հմայակի Գալստյանին, Կարինե Հմայակի Գալստյանին, Լյուդմիլա Արմենակի Գալստյանին, Լուսինե Սերգեյի Ղանդիլյանին, Նելլի Սերգեյի Գալստյանին, Վարսենիկ Սերգեյի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 0.64քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 17.09.2008թ., 04.07.2006թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 31.07.2007թ. հ.1045, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 15.04.2009թ. հ.20/2-Ե/244 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.04.2009թ. հ.3214 եզրակացությունը, համաձայն որի Օտյան փողոցի հ.43/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Օտյան փողոցի հ.43/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հասմիկ Լևոնի Հարությունյանի, Արտաշես Հմայակի Գալստյանի, Կարինե Հմայակի Գալստյանի, Լյուդմիլա Արմենակի Գալստյանի, Լուսինե Սերգեյի Ղանդիլյանի, Նելլի Սերգեյի Գալստյանի, Վարսենիկ Սերգեյի Մկրտչյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 576.2քմ մակերեսով հողամասին կից 0.64քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.64քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Օտյան հ.43 և հ.43/1 հասցեի բնակելի տներին տրամադրել հասցե՝ <<Օտյան փողոցի հ.43/1 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հասմիկ Լևոնի Հարությունյանի, Արտաշես Հմայակի Գալստյանի, Կարինե Հմայակի Գալստյանի, Լյուդմիլա Արմենակի Գալստյանի, Լուսինե Սերգեյի Ղանդիլյանի, Նելլի Սերգեյի Գալստյանի, Վարսենիկ Սերգեյի Մկրտչյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա–Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ